Լաբորատոր աշխատանք

ԱՆՈԹԱԶԱՐԿԻ ՉԱՓՈՒՄԸ

Աշխատանքի նպատակը. Տարբեր իրավիճակներում որոշել սրտի կծկումների թիվը մեկ րոպեում:

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ. Վայրկենաչափ:

Փորձի նկարագրությունը: Նախաբազկի ստորին մասում մեծ մատի ուղղությամբ շոշափել–գտնել անոթազարկը:

Գործի գցել վայրկենաչափը և հաշվել զարկերի թիվը մեկ րոպեում,

- երբ հանգիստ նստած եք,
- երբ կանգնած եք,
- երբ կատարել եք տասը ծնկածալում:

Փորձի արդյունքները գրանցեք աղյուսակում.

Վիճակը	Անոթազարկերի թիվը մեկ րոպեում
Նստած	
Կանգնած	
10 ծնկածալումից հետո	

Համեմատեք փորձի արդյունքները և կատարեք եզրակացություն: